ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄ

Օրը 24 ժամ Աստծո հետ

Մաս 1

- **Բացականչիր փառաբանության խոսքեր**

«Իմացի՛ր այսօր և սրտիդ մեջ դի՛ր, որ Տերն է Աստված վերևում՝ երկնքում, և ներքևում՝ երկրի վրա, և որ ուրիշը չկա։» Բ Օրենք 4:39

«Սա այն օրն է, որ Տերն արարեց. թող ցնծանք և ուրախ լինենք նրանում։» Սաղմոսներ 118:24

Համարներ շաբաթվա ամեն օրվա համար.

Սաղմոս 66:4, Սաղմոս 138:2, Սաղմոս 35:28,

Սաղմոս 68:19, Սաղմոս 86:12, Սաղմոս 145:1-3

- **Զգա Աստծո՝ քեզ տված արժեքը**

«Օրհնյա՛լ է Տերը, որ իր հրաշալի ողորմությունը ցույց տվեց ինձ... Որովհետև քո ողորմությունն ավելի լավ է, քան կյանքը. իմ շրթունքները պիտի գովեն քեզ։» Սաղմոսներ 31:21, 63:3

- **Թաքցրու Աստծո խոսքը սրտիդ ու մտքիդ մեջ**

«Իմ սրտում թաքցրի քո խոսքերը, որ չմեղանչեմ քո դեմ։» Սաղմոսներ 119:11

«Մեծ խաղաղություն կա քո օրենքը սիրողների համար, և գայթակղություն չկա նրանց համար։» Սաղմոսներ 119:165

«Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ ճանապարհի համար։» Սաղմոսներ 119:105

- **Խոսիր Աստծո հետ աղոթքով**

«Ո՞վ է ձեզանից այն մարդը, որից եթե իր որդին հաց խնդրի, նրան քար կտա, կամ ձուկ խնդրի, նրան օձ կտա։ Արդ, եթե դուք, որ չար եք, ձեր զավակներին բարի պարգևներ տալը գիտեք, հապա որքա՜ն առավել ձեր Հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, ովքեր խնդրում են իրեն։» Մատթեոս 7:9-11

«Երանելի է այն մարդը, որ...նրա հաճույքը Տիրոջ օրենքի մեջ է, և ցերեկ ու գիշեր մտածում է նրա օրենքի մասին։ Նա ջրերի հոսանքի մոտ տնկված ծառի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին, և նրա տերևը թառամելով չի թափվում, և ամեն ինչ, որ անում է, հաջողվում է նրան։» Սաղմոսներ 1:1-3

Հաջորդ Քարոզի Թեման

ԵՐԲ ԴՈՒՐՍ ԵՍ ԳԱԼԻՍ ՏՆԻՑ

Հովիվ Սարօ Խաչիկեան